

ՆԱԻԹԱՐԴԻԿԱՄԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

ՑՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

ՆԱՍԱԿ ԵՐՐՈՐԴ

Մեր երկրորդ նամակում խոստացել էինք մանրամասնօրէն խօսել պղ. Ա. Կ. Շոնի ծրագրի և Պետերբուրգումնաւթարդիւնաբերողների կազմած պայմանագրի մասին։

Սկսենք պղ. Շոնի ծրագրից։ Ալդ պարոնը, մեր արտասահմանեան առևտուրը մի մարմնի ձեռքում կենտրոնացնելու համար, առաջարկեց մեր կէրոսինագործարանատէրերին կազմել ակցիոնէրական ընկերութիւն հետ- և առ ֆիրմակով «Դաշնակցութիւն ռուսաց կերոսինագործարանատէրերի»։ Ընկերութեան նպատակը ապագէս էր որոշած։ Արարելաւել և հա- մակերպել Ռուսաւտանից դուրս հանւած նաւթափին արդիւնքների վաճառը, օտարերկրեակ վաճառականներին և նաւթարդիւնաբերողների հետ համա- ձանութիւն կաւացնելով՝ հում նաւթի և նրանից ստացած արդիւնքների հա- մար կառուցանել շտեմարաններ, գրաւական տալ ապրանքների երաշխաւո- րութեամբ։ Գնարել ճանապարհածախքն և առհաստարակ աշնակիսի ծախքերը, որոնք լինում են ապրանքի մինչեւ վաճառման ժամը։ Նաւթարդիւնքների վաճառելու համար կազմել գործակալութիւններ, նշանակել կոմիսիոնէրներ, խնամել և տարածել ռուսական նաւթարդինք պարունակող նաւազնաց ութիւնը օտար ջրերում։

Ազժմ մենք առաջ կբերենք ակդ ընկերութեան կանոնակրութեան գլ- խաւոր կէտերը։ Ընկերութեան մալր գրամագլուխը պիտի կազմեր 3000 հատ ակցիա 10000 բուրդի արժողութեամբ իւրաքանչիւրը 3000 հատը սկզ- բում պիտի բաժանել թագու և նրա շրջակալքում կերոսինի գործարաններ ունեցողներին, իսկ մնացեալը ըստ պահանջման։ ա) այն գործարանատէր- երին, որոնք, կանոնադրութիւնը հաստատւելուց հինգ ամիս անցած, դեռ միացած չեն լինիլ դաշնակցութեան։ բ) այն մարգկանց, որոնք գործա-

րաններ կը չենեն դաշնակցութեանը օրինական կերպարանք ստանալուց իւսու և գ) առնասարակ ոռուսահպատակ գործարանատէրերի, որոնց գործարանները գտնւում Բագուից և նրա շրջակալքից զուրա Ակցիաներ կարողեն ձեռք բերել միմիան կերոսինի գործարանատէրերի թէ ինչքան ակցիա լատկացնել իւրաքանչյւր գործարանատէրին, ալդ հարցը վճռում է ընդհանուր ժողովը ինկատի առնելով նրա գործարանի արդինարելութեան չափը, Դաշնակցութեան գործը կառավարելու համար թէ ակտեղ և թէ արտահսաման սահմանում է վարչութիւն հինգ դիրեկտորներից, Ամենայն տարի վարչութիւնը պարտաւոր է ներկալացնել ընդհանուր ժողովին ի հաստատում իւր ապագակ գործունէութեան նախագիծը, Ակցիակի տէրը ընդհանուր ժողովին մասնակցում է կամ ինքը անձամբ, կամ ուղարկում է իւր հաւատարմատարին, սական երկու հաւատարմատարից աելի ուղարկելու իրաւունք չունի. ընդհանուր ժողովում հարցերը վճռում են ձաների ½ մեծամասնութեամբ. ընկերութիւնը իւր գործունէութիւնը կը դադարեցնի ա) ընդհանուր ժողովի վճռով և բ) եթէ նա մայր դրամագլուխի ½ մասը արդէն կորցրած լինի իւր վնասներում և թէ ակցիոների տէրերը մէկ տարւակ ընթացքում տարեհաշիւը հաստատելու օրից չեն լրացնի ալդ պակասը. Ահա ալդ հմտնքների վերակ էր կազմած վիշեալ ծրագիրը Ալդ ծրագրի մէջ մենք ոչինչ բարդ բան չենք տեսնում. նա իրազործելի է և շատ հեշտ կերպով.

Տեղական կէրոսինագործարանատէրերից մէկը, պ. Յ. Ղովասեանը, ալդ ծրագիրը մի գեկուցման հետ, որտեղ նկարագրում է մեր վաճառական-ների դրութիւնը, ներկալացրեց մանուֆակտուրակի և արդինարերութեան գիպարտամենտի դիրեկտոր գաղտնի խորհրդական պր. Վ. Ի. Կաւալեւս-կուն. Ալդ գեկուցման մէջ պարունը ի միջի ալլոց ասում է. «այս երկու տարւակ կրիցիսը իւր անընդհատ վնասներով կատարելապէս խլել է մեր գործարանատէրերի ձեռքից նոցա բոլոր ազատ միջոցները և ալդ չինչին դումարը, 2,000,000ը, որը անհրաշեմու է ակցիոներական ընկերութիւն հաստատելու համար, հաղիւ թէ կարելի լինի ճարել Բագւում. Սական ալդ անկարամարութիւնը հարկաւոր է հեռացնել և հէնց ալդ պատճառով անհրաժեշտ է միաժամանակ կանոնադրութիւնը հաստատելու հետ սահմանել պետական բանկի մասնակցութեամբ լատով վարկ ակցիանելը առնելու համար. Ալդ վարկը կարելի կլինի ապահովացնել գործարանատէրերին պատկանեալ կարերով, գործարաններով և պարտաթղթերով»

Պր. Կաւալեւսկին ալդ ծրագիրը գեկուցման հետ ներկալացնում է նորին բարձր գերազանցութիւն Փինանսների մինիստր պր. Ա. Իւ. Վիտուտէին, որը և թուլատրում է հրաւիրել Պետերուրգում նաւթարդիւնարերողների և կէրոսինագործարանատէրերի մի ընդհանուր ժողով, իրերի դրութեան հետ աւելի մօտիկ ծանօթանալու և քննելու նպատակով. Առա-

ջին ժողովը նշանակում էր ներկալ տարւակ սեպտեմբերի 29-ին, Ալի մասին նախագէս լաւոնում են բազու նաւթարեիւնաբերողների և կերախնակործարանատէրերի ժողովի խորհրդին, սական աւելացնելով՝ թէ ժողովին կարողեն մասնակցել ան գործարանատէրերը, որոնց գործարանների արդինաբերութիւնը 1892 թ.ին 500 հազար փութից պակաս չէ, իսկ արդինաբերութիւնը կարողեն իրանց միջից ներկալացուցիչ ընտրել և ուղարկել ժողովին մասնակցելու, Համաձան ալդ հեռագրի՝ փոքր գործարանատէրերը ժողովին մասնակցելու, Համաձան ալդ հեռագրի՝ փութից պակաս չէ, իսկ մասնաբերութիւնը համար ներկալացուցիչ ընտրեցին Ե. Մելիքեանին, Արշ. Յովհաննա-իրենց համար ներկալացուցիչ ընտրեցին Ե. Մելիքեանին, Արշ. Յովհաննա-նին և Արշ. Մելիք-Դադանին. Սական ալդ վերջինը հրաժարւեց, իսկ միւսները զնացին, անպէս որ սեպտեմբերի 29-ն բոլորն էլ ախտեղ էին: Միւսները զնացին, անպէս որ սեպտեմբերի ժողով չեղաւ, ալդ եղաւ նախալարատաստաբաց ալդ օրը պաշտօնական ժողով չեղաւ, ալդ եղաւ նախալարատաստաբացին իր իր թէ վերին աստիճանի բարդ լինելու պատճառով, թէ ինչում էր կալանում նրա բարդութիւնը, մեղ տակաւին չալտնի չէ: Մենք զիմել ենք ժողովում ներկալ եղողներից մի քանիսին, սական մի որոշ պատասխան չենք ստացած, ուստի ալդ կէտը մեղ համար դեռ մուժ է. դուցէ ձիւնը հալի և ամնն ինչ պարզէի Սպասանք...

Առաջին պաշտօնական ժողովը կալացաւ հոկտեմբերի 2-ն, նախադահութեամբ արդիւնաբերութեան և մանութիւնակալի դեպարտամէնտի դիրեկտոր գաղտնի խորհրդական Վ. Ի. Կաւալեսկու: Ժողովին մասնակցում էին. Գինանսների մինիստրութեան կողմից երկաթուղարին գործերի դեպարտամէնտի դիրեկտոր Վ. Վ. Մակարիսով, փոխ-դիրեկտոր Գ. Ս. Նազուրով, իսկական պետական խորհրդական Վ. Ի. Գոլուբեով և Մ. Ի. Լազարե, պետական կալւաճների մինիստրութեան կողմից գաղտնի խորհրդ. Կ. Ա. Սկալովսկի և իսկ. պետ. խորհ. Ա. Վ. Դավիդով, ճանապարհների հազարդական պայութեան մինիստրութեան կողմից իսկ. պետ. խորհ. Ա. Ն. Գորչակով, թ. Զիկսապառէ և Կ. Պ. Լազարե և ճանաթարդիւնաբերութեան ներեւ. Բ. Զիկսապառէ և Կ. Պ. Լազարե և ճանաթարդիւնաբերութեան ներեւ. Կապացուցիչները՝ պ. Յ. Ղուկասեան, Յ. Կ. Շոն, Վ. Ի. Ռազովին, Մ. Օ. Բաեր, Ա. Ի. Կուկորնիկով, Լ. Ի. Գուլիելմ, Բ. Ն. Նիկալաևիս, Կ. Կ. Նուլիս, Ի. Ս. Շիրակես, Ն. Ս. Մելիքեան, Մ. Ե. Բելիամին, Գ. Մ. Լիանոզով, Գ. Մ. Արաֆելով, Իւ. Մ. Տիչչենկո, Վ. Ի. Կոլորով, Մ. Ա. Կրասիլնիկեան, Ն. Մ. Շագիդանեան, Արշ. Յովհաննան և ուրիշ շատերը:

Վ. Ի. Կաւալեսկին ժողովին նիստը բացեց մօտաւորապէս հետևած խօսքերով. Ամբողջ տասը տարի է անցել ան օրից, երբ առաջին անգամ ուստաց կէրոսինը արտահանեց Անդրկովկասեան երկաթուղով դէպի Բաթում և ախտեղից արտասահման. Աւազ ալդ տասը տարին ցաւալի վերջ ունեցաւ, որը աւելի լաւ չախտնի է ձեզ, գործարանատէրերից ներկան համեմատելով 1890 թ. հետ, երբ ալդ հարցը վերջին անգամ քննուեց կան համեմատելով

Փինանսների մինիստրութեան մէջ՝ նաւթարդիւնաբերական գործը այն աստիճանի կերպարանափոխւել է զէպի վատը, որ կարելի է ասել, թէ նա զոնւում է կրիտիկական դրութեան մէջ, Ահա, ալդ է ստիպում մտածել և որոնել միջոցներ նորան ալդ դրութիւնից հաներուու. Ապա նստին չափոնելով՝ թէ ինչ նպատակով է հրաւիրւած ալդ ժողովը՝ շարունակեց. Ալդ հարցի սկզբնական քննութեան ժամանակ ֆինանսների մինիստրութիւնը այն կարծիքի է եղել, թէ ան բոլոր միջոցները, որոնք գործ են դնելու նաւթարդիւնաբերական գործը վերականգնելու նպատակով, իրական նշանակութիւն կունենան ան զէպքում, եթէ իրանք գործարանատէրերը գործի ներքին կանոնաւորութեամբ և կազմակերպութեամբ կարողանան հեռացնել իրար զէմ մրցութիւնը արտասահմանեան վաճառանոցներում, որը ալսօր նաւթարդիւնաբերական գործի անկման զիսաւոր պատճառներից մէկն է. Ներկայ ժողովի նպատակը պարզ է. նա հրաւիրւած է միմիան նաւթի արտասահմանեան առևտուրը կանոնաւորելու համար. Ալդ կանոնաւորման համար նախ և առաջ անհրաժեշտ է միութիւն մեր գործարանատէրերի մէջ մի կողմից և միութիւն Ամերիկայի ընկերութեան հետ միւս կողմից. Ալդ ձեռնարկելու ամենաքարմար բոպէն է ալժմ, որպէսեան վերջին տեղեկութիւններից երեսում են, որ Ամերիկայի ընկերութիւնը, ինքը ալս բոպէիս միանալու միջոցներն առիթ է որոնում. Ամառ մի քանի գործարանատէրերից ստացւած են զեկուցումներ, որոնցից երեսում է, որ գործարանատէրերի մէջ միտք է լզացել՝ ենթաղրեալ միութեան ակցիոներական ընկերութեան ձև տալ, որի կանոնադրութեան ծրագիրը ևս ներկալացրել են ֆինանսների մինիստրութեանը. Համակրելով ալդ մտքին, ֆինանսների մինիստրութիւնը թուլարեց ներկայ ժողովը. Դեպքարա մէնտի և գործարանատէրերի նախապատրաստական ժողովներում քննւեց ալդ ծրագիրը. սական պարզաց, որ բոպէի պահանջներին բաւարարութիւն տալու համար նա բաւական բարդ է. Ուստի որոշեց մինչև ակցիոներական ընկերութեան կազմելը՝ դիմել աւելի միջակ միջոցների, կազմել փորձի համար պամանագիր, որի ծրագիրը արդէն մշակել են ակտան մի քանի մեծ գործարանատէրերի ներկալացուցիչները և որը պիտի լինի ալս օրւակ ժողովի քննութեան առարկան. Նոր առաջարկութեան զիսաւոր միտքը ան է, որ կէրոսին վաճառելու գործը արտասահմանում զանձւի միմիան ան ֆիրմաներին, որոնք անտեղ ունին արդէն կազմակերպւած գործու. Ի վերջու ասեց թէ ֆինանսների մինիստր պր. Ս. Խ. Վիտոտէ կալանել է, թէ նա շատ ուրախ կը լինի, եթէ ներկայ ժողովը փակւելով՝ կը տակ կենդանի և լաւ կազմակերպւած գործ արտասահմանան առևտուի համար¹⁾). Մինիստրութիւնների կողմից ներկայ եղողները

¹⁾) Ճառի բովանդակութիւնը մենք քաղել ենք ռուսաց „Խօսութիւն”

բոլորը միաձախն ըաժանեցին պղ. կաւալեւսկու կարծիքը Ժողովի մնացեալ ժամանակը նուիրեցին ալն հարցի քննութեան՝ ինչպէս արդեօք հաշտեցնել մեծ և փոքր գործարանատէրերի շահերը արտահանութեան գործում. Սական ոչ մի եղրակացութեան չհասան, ուստի միւնոն հարցին նուիրեցին և երկրորդ ժողովը՝ որ կալացաւ 4-ն հոկտեմբերի.

Մեծ գործարանատէրերը առաջարկում էին՝ զաշնակցութեան մէջ իւրաքանչիւրի մասնակցութեան չափը որոշել համաձախն նորա գործարանի արդինաբերութեան, որի որոշելու հիմք ընդունել վերջի երեք տարիներից մէկի ընթացքում արտահանած քանակութիւնը. Սական փոքր գործարանատէրերի ներկալացուցիչ պղ. Ալբ. Յովաննեանը այդ անձարմար գտնելով առաջարկեց մասնակցութեան չափը որոշել համեմատ դէպի Բաթում արտահանածի, որովհետեւ մեծ գործարանատէրերը այդ անելու միջոց չունին. Նոքա, չնորին մի քանի հանգամանքների, ստիպւած են իրանց գործարանների ամբողջ արդինաբերութիւնը արտահանել դէպի Բաթում, որովհետեւ Ռուսաստան կէրոսին ուղարկելը կապւած է մեծամեծ ծախքերի հետ, որը անելու գժբաղդաբար միջոց չունի փոքր գործարանատէրը, մինչդեռ դէպի Բաթում ուղարկելը համարեալ թէ ոչինչ դժւարութիւն չի ներկալացնում նորու համար. Ակդ մասին մի կերպ համաձանդութիւն կախացնելուց կետու, որոշեցին ալն գլխաւոր կէտերը, որոնց հիման վերակ պիտի խմբագրէր ենթադրեալ դաշնակցութեան պայմանագիրը, ապս. ընտրեցին մի մամնաժողով նախագահութեամբ իսկ. պետ. խորհրդ. ի. Դոլուբեռովի, պավմանագիրը խմբագրելու համար. Մասնաժողովի անդամ ընտրւեցան նորէլ ֆիրմակի ներկալացուցիչ պղ. Վելեմինով, կասպեան-Սե-ծովեան ընկ.՝ պղ. Ֆէկով, կասպեան ընկ. պղ. Ղուկասեան, Շիրակեւ և ընկ.՝ պղ. Պոկոփիեւ, Թաղիե, ի-պղ. Շոն և փոքր գործարանատէրերի՝ պղ. Յովաննեանը. Մասնակցութիւնը հարաւրեցան ֆինանսների մինիստրութեան օրէնսգէտ պղ. Բիլիւսովին և արդարադատութեան—Լունիցիկի, Կիեւի համալսարանի պղոփեսոր Յիսովիչ, որը ալդ ժամանակ Պետերբուրգ էր, և երդւեալ հաւասարմասար Պոտէխինը.

Ակդ մամնաժողովը հոկտեմբերի 21-ն նաւթարդիւնաբերողների երրորդ ժողովին ներկալացրեց ենթադրեալ դաշնակցութեան համար մշակած պայմանագրի վերջնական խմբագրութիւնը. Ահաւասիկ այդ պայմանագրի համառօտ բովանդակութիւնը. Բագրի կերոսինագործարանատէրերը պայմանատրուում են վաճառել իրանց կէրոսինը արտասահմանեան վաճառանոցներում՝ հինգ անդամներից բազկացած. կոմիտէտի միջոցով և առեստրական գործակալների ձեռքով. Որոշւած է իւրաքանչիւր.

գործարանատիրոջ մասնակցութեան չափը արտահանութեան գործում որտեղ ի նկատի առնելով 1892 թ. ընթացքում իւրաքանչյւրի արտահանած քանակութիւնը. Որոշած քանակութիւնից աւել արտահանած իւրքանչյւր փութ կերուինի համար մեղաւոր գործարանատէրը լօդուտ դաշնակցութեան պարտաւոր է վճարել 15 կոպէկ. Առետրական գործակալները ընտրւած են ան գործարանատէրերը, որոնք արտասահմանում ունին արդին կերտուինի կազմակերպած առետուր՝ Նորէլ և Ռոտշիլդ, Նորքա աղջիկանինը վաճառելու են իրանց անունով կերտուինի վաճառման գործին վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները անում են գործակալները. Նոցաձեռնում է գտնուած Բագկից արտահանելու, Բաթում պահելու և արտասահման վաճառելու գործը. Բաց և անպիս նորքա պարտաւոր են իրանց գործունէութեան մասին հաշիւ տալ կոմիտէտին, որը, եթէ կամնայի իրաւունք ունի ստուգել տեղում Եթէ տւած հաշիւներից պարզկի գործակալների դանդաղութիւնը և առհաւարակ նոցա անտարբերութիւնը դէպի նրանց լանձնած գործը, ալդ դէպքում կոմիտէտը կատարեալ իրաւունք ունի նոցա հնուացնել ալդ պաշտօնից և նոցա աեղը կարգել ուրիշներին, միմիան համաձայն ընդհանուր ժողովի որոշման. Պաշտօնից հեռացրած գործակալներին տրւում է իրաւունք բոլորովին հրաժարւել դաշնակցութեանը մասնակցելուց և պալմանագրի լօդածները կատարելուց աղատ են, եթէ միան իրանք ալդ բանը կամնան, կոմիտէտի պարտաւորութիւնն է հակել գործակալների և գործարանատէրերի իրանց վրակ առած պարտականութիւնների ծիշտ կատարելու վրաւ. Նա է որոշում պատրաստելիք կերուինի լատկութիւնները և գործակալների ծախսերի չափը. Նա է գործարանատէրերի հետ հաշիւները վերջացնում. Ալդ հիմքերի վրա դաշնակցութիւնը կազմւած կը համարւի եթէ 85% բոլոր գործատէրերի կըստրագրեն, և զօրութիւն կունենալ մինչև 1-ն ապրիլի 1899 թ.. Սական եթէ ալդ դաշնակցութիւնը վերածւի ակցիոներական ընկերութեան և կամ թէ պալմանագրի որ և է լօդածի միտքը կամ խմբագրութիւնը փոխւի, կոմիտէտը ընդհանուր ժողովի լանձնարարութեամբ կարող է դիմում մինհաստրութեան, որի թովստութեամբ միմիան կը կատարեն ալդ բոլորը. Ալդ դէպքում պալմանագրի թէ մնացեալ լօդածները և թէ նոր մտցրած փոփոխութիւնը պարտաւորեցուցիչ է բոլորի համար.

Պալմանագրի թերութիւնները քննելուց առաջ մենք աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել ժողովում կազմած ցուցակի և նաւթարդիւնաբերողների մասնակցութեան չափը որոշելու մասին. Պալմանագրի շրջ լօդածին կցւած է Բագւակ կերուինագործարանատէրերի ցուցակը և նորա դէմ նշանակած է իւրաքանչյւրի մասնակցութեան չափը. Ուշադրու-

թեամբ եթէ նալէք ալդ ցուցակին, խսկոն և եթ կը նկատէք, որ ալդ ցուցակից մի քանի գործարանատէրեր, թէն շատ փոքրաթիւ, դուրս են ձգւած և մի քանի գործարանատէրերի իրաւունք է տւած աւելի քանակութիւն արտահանել, քան նա արտահանել է 1892 թ.. Եւ ովքնը են ալդ աւելի մեծ քանակութեան իրաւունք ստացողները: Նոքա, որոնք մասնակցել են ժողովին կամ անձամբ կամ թէ լանձնարարել են ուրիշին իրանց փոխանակ պաշտպանել իրանց շահերը: Մենք կարծում ենք, որ ճշմարտութեան դէմ մեղանչած չէինք լինիւ, եթէ ասենք, որ իրաքանչիւր դուրս գնացողը, նոյն իսկ ներկալացուցիչները, գլխաւորապէս իրանց մասին են մտածել, Բաց աղջպիսի գործում, երբ կերոսինագործատէրերի պէտք թէ չինելու է վճռւում, չէր կարելի անձնականը ընդհանուրի շահերից գերադասեն:

Ալսպէս թէ անսպէս, ժողովները վերջացան և կառավարութեան ներկալացուցիչ՝ պր. Կաւալեւսկին՝ ապագակ դաշնակցութիւնը խոստացաւ արտօնութիւն ձեռք բերել. դեռ պաշտօնապէս լաւոնի չէ, սակայն լուր է պտտում թէ Անդրկովկասեան երկաթուղու Փրախտից, Բագրէց մինչև Բաթում, Նավթարդիւնքների համար կը պակասացնեն 7 կոպէկ¹⁾:

Ալժմ, անցնելով պալմանագրի քննութեան, նախ և առաջ պէտք է ասենք, որ ալդ պալմանագրի հինան վրաէ կազմած դաշնակցութիւնը անքան էլ լաւ ապագակ չի խոստանում. թէն ժամանակատրապէս կարող է աւելի լաւ լինել քան հիմա է. Մեր կարծիքով նա մեր տեղական վաճառականների անկման վերջին հարածը կը տալ. Արդեօք ինչ է նշանակում, որ մեր կերոսինը արտասահման պիտի վաճառվի նորէլի և Ռոտշիլդի ձեռքով և նոցա անունով. Զէ որ ալդ նոցա փափիալած միտքն է, չէ որ ալդ էին ուզում նոքա: Քանի տարի է, որ նոքա ամեն միջոց զործ էին գնում ալդ նպատակին համնելու, լինել ուստաց կերոսինագործարանատէրերի միակ ներկալացուցիչը արտասահմաննեան վաճառանոցներում. սակայն ալդ չէր լուղողում, որովհետեւ որոգալթ ընկնողները շատ շուտ էին հասկանում իրանց աննախանձելի դրութիւնը և մի կերպ ազատելով փախչում էին: Ալդ բոլորից լիսու տասոր մենք փառաւոր կերպով տալիս

¹⁾ Նորէլի ընկերութեան վարչութիւնը Պետերբուրգից սուն դեկտ. 7-ին հեռագրեց Բաքու, թէ կառավարութիւնը մերժեց արտօնութիւններ տալ միութեանը. ալդ պատճառով նորէլի ընկ. վարչութիւնը առաջարկում է միութեանը մասնակցողներին՝ քանդել պալմանադիրը որ ստորագրած էր հոկտեմբերի 26-ին. Բագրէց թիֆիս ստացած հեռագիրը աւելացնում է՝ գործարանատէրերի լրացնաւութիւնը զարհուրելի է. Վազր, 18 դեկտ., նշանակած է ընդհ. ժողով. Բագրէց իրաւաքանները հաւատացնում են որ նորէլը իրաւունք չունի պալմանագիրը քանդել և խախտել միութիւնը.

ենք նոցա կատարեալ իրաւունք կարգադրել մեր ապրանքի վրայ ինչպէս կըրաբեհածն և նրանց ընտրում ենք մեզ համար տուարական գործակալներ արտասահմանի ան վաճառանոցներում, Նրանց գործակալներ ընտրելով միենողն ժամանակ տալիս ենք նրանց այնպիսի արտօնութիւն, որ ոչ մէկը զաշնակցութեան մասնակցողներից չունի Ազ այն է, որ եթէ նրանք կանգնած լինին իրանց կոչման բարձրութեան վրայ մենք իրաւունք ու նինք հեռացնել նրանց ազդ պատօնից, նշանակելով նրանց տեղը ուրիշին միենողն ժամանակ նոքա իրաւունք ունեն թողնել դաշնակցութիւնը, հեռանալ և նորանից անկախ կերոսինի առևտուր ունենալ արտասահմանեան վաճառանոցներում. մինչդեռ դաշնակցութեան միւս մասնակցողներից ոչ մէկը ազդ անելու իրաւունք չունի, հակառակ դէպքում կը վճարի մեծամեծ տուգանքերու Մենք դէմ չենք նրանց գործակալ ընտրելուն, ընդհակառակը շատ ուրախ ենք որ գործը բանիմաց ֆիրմաների ձեռքին է կենարոնանում: Յամենան դէպս նրանք աւելի քան կարող են անել, քան ուրիշը տեղական ֆիրմաներից: Բաց մենք դէմ ենք գործակալներին ապագախ արտօնութիւն տալուն և մեր կերոսինը նրանց անունով ծախսելուն և անա թէ ինչու Մի երկու կամ երեք տարի գործակալի պաշտօնը նրանք կը վարեն, ինչպէս ազդ վակել է բարեխիղ գործակալն, արտասահման ռուսաց կերոսինը կը ճանաչվի նորէլի և նոտշիլդի անունով, ռուսաց գործարանատէրերի մրցումն աւելի ևս չի լինիլ: Ազ ժամանակ եթէ նրանք սկսեն թուզ վերաբերել դէպսի իրանց պարտաւորութիւնները, իսկ կոմիտէտը ազդ տեսնելով հեռացնի նրանց գործակալի պաշտօնից, ասացիք խնդրեմ, թնչ վեաս ազդ դէպքում նորէլին կամ նոտշիլդին: Հողը պատրաստել են, արտասահման մեր կերոսինը նրանց անունով են ճանաչում, հետեւագէս նրանց էլ զիմելու են անսաեղի վաճառականները: Բաւարարութիւն տալ նրանց պահանջին միշտ կարող են, որովհետև նորէլ և նոտշիլդ իրանց սեփական գործարաններից արտահանում են մօտ 15 միլիոն փութ կերոսին, որ կազմում է աւելի քան 25% ամրող արտահանութեան: Նոր գործակալներ կը նշանական ուրեմն կը սկսի մրցումն նորերի և ճների մէջ, Մինչև դաշնակցութեան կերոսինը կանոնաւոր կերպով վաճառելը, դաշնակցութիւնը ստիպւած կը լինի մեծամեծ վեասներ կրել, որ յամենան դէպս ցանկալի չեր ազդ կարճ ժամանակամիջոցում, Որպէս զի ապագալում ազդպիսի դէպքեր պատճառ չդառնաւագին զուր տեղից վեասներ կրելու, հարկաւոր է դաշնակցութեան կերոսինին ուրիշ անուն տալ: միմիան ոչ նորէլ և ոչ նոտշիլդ: Ազդպիսակ թէկուղ գործակալները տարէնը մէկը փոխի, գարձեալ չի կարող դիմադրել դաշնակցութեան: Ուրեմն պակմանագրի ազդ օգուածը ոխալ է, Ախալ է նաև ալն, որ կոմիտէտը իրաւունք չունի իսառնելու գործակալների: կարգադրութեան մէջ վերաբերեալ կերոսինի վաճառաման: Գործա-

կալները, որպէս մարդիկ, ենթակալ են սխալման, ուստի կարծում ենք շատ մեծ պատասխանատութիւն են լանձն առնում գործակալները՝ իրանց վրայ առնելով բոլոր կարգադրութիւնները։ Ալդ դէպքում կերոսինադրութատէրերի և կոմիտէտի մէջ տարածախութիւններ շատ շուտ կը ծագեն և գուցէ պատճառ։ Մինեն դաշնակցութեան քանդակուն, Ալդ անկարմարութեան տեղիք չտալու համար մենք կարծում ենք աւելի լաւ կը լինի, եթէ գործակալները գործեն կոմիտէտի ձրագրով և հրահանգներով, որը պիտի հաստատած լինի ընդհանուր ժողովից, որպէս զի իւրաքանչիւր գործարանատէր իմանակ թէ ինչպէս և ինչ եղանակով են գործում գործակալները—Վերջապէս անկաջող է և քանակութեան չափը որոշելը Արտահանելիք կերոսինի քանակութեան չափը որոշել են՝ ընդունելով 1892 թ. արտահանած քանակութիւնը, որպէս նորմա։ Սական ալդ սխալ է, թալունի է, որ 1892 թ. սաստիկ խոլերավի պատճառով համարեա թէ բոլոր փոքր գործարանատէրերը լումիսից մինչև հոկտեմբերը զագարեցրել էին իրանց գործերը, իսկ մեծ գործարանատէրերը՝ Նորէլ Ռոտշիլդ և ուրիշ մի քանիսը մի րոպէս անգամ չեն զաղարեցրած իրանց գործերը։ Նոքա, կրինակի ռոճիկ տալով թէ ծառալողներին և թէ բանտորներին, շարունակում էին իրանց գործերը նույն կարգով ինչպէս էր խաղաղ ժամանակ և մի բան էլ աւել։ Գործարանների դաղարած լինելու պատճառով Անդրկովկասեան երկաթուղու վագոնների մեծ մասն էլ զատարկ ճանապարհ վրայ էր մնացել։ Ալդ հանգամանքից օգտագով նա մանաւանդ որ վագոնների կարգադրիչ մասնաժողովի կողմից արգելք կամ մերժում չկար, Նորէլ Ռոտշիլդ և մի քանի. Փիրմաններ խոլերավի ժամանակ արտահանեցին աւելի քան կարող էին ուրիշ ժամանակի իսկ խեղճ փոքր գործարանատէրը ալդ անելու միջոց չունէր փողի սակաւութեան պատճառով։ Ալդպէս ուրիմն տարապընտրութիւնն էլ անկաջող է, Սական մենք որբազան պարտականութիւն ենք համարում ասել, թէ մասնակցութեան չափը որոշել համաձան գործարանատէրերի որ և է տարի արտահանած քանակութեան—մենք սկզբունքով սխալ ենք գտնում, որովհետեւ արտահանած քանակութիւնը երբէք նիշտ գաղափար չի տալ գործարանի արդիւնաբերութեան մասին։ Հաստ անգամ պատահում է, որ մէկ գործարանատէր առնում է միափակ կերոսինապար պալմանով, որ ապրանքը լանձնւի առնողի գործարանի պահանջների մէջ, Գործարանատէրը ալդ առած կերոսինը ծախում է կամ վագոնի կամ նաւի մէջ։ Ալդ դէպքում վաճառւած կերոսինը հաշում է որպէս արդիւնաբերութիւն ալդ գործարանի, Մենք կարծում ենք որ ալդ հանգամանքը բաւական պերճախօս կերպով վկացրամ է, թէ որ աստիճանի սխալ է ժողովի որոշումը։

Ահաւասիկ ալդ բոլոր հանգամանքներն են պատճառ, որ այսօր պալմանագրին ստորագրողների թիւը չի աւելանում, թէն լուր է պատճառ,

որ 65% արդէն ստորագրւած են, բայց մենք հաստատ աղքիւրներից գիտենք, որ ալդ լուրը սուս է, Գուցէ ստորագրել խոստացողների թիւը հասնի 65%, բայց ալդ էլ կասկածում ենք:

Սակայն գործարանների արդիւնաբերութեան նիշտ չափը որոշելու համար մենք կառաջարկեինք հետեւալը. տեխնոլոգիներից և ինժենէրներից հարկաւոր է կազմել մի մասնաժողով, որին և պէտք է լանձնել՝ կերոսինագործարանների ցուցակ կազմել՝ որոշելով նրանցից իւրաքանչյւրի արդիւնաբերութեան չափը. Մասնաժողովը ալդ կարող է որոշել՝ ինկատի առնելով նաւթ գտնուու կաթսաների թիւը և նրանցից իւրաքանչյւրի պարունակութիւնը (օճառություն), Պարզենք մեր սասած օրինակով. դիցուք Տ. գործարանը ունի և հատ կաթսակ 2000 ֆութի հում նաւթ պարունակող և 6 հատ—1500 ֆ. ուրեմն եթէ ալդ կաթսաները բոլորը բանելիս լինին օրնկան մէկ անգամ՝ Տ. գործարանին հարկաւոր է հում նաւթ (2000×4)+(1500×6)=17000 ֆութի. Հաշմելով թէ իւրաքանչյւր 3 ֆ. կամ քիչ աւել հում նաւթից ստացւում է մէկ փոփթ կերոսին, կիմանաճք որ Տ. գործարանը օրէկան կարող է պատրաստել 5000—5600 ֆ. կերոսին, իսկ մէկ տարում 1,800,000 ֆ.. Ազդակս որոշելով իւրաքանչյւր գործարանի արդիւնաբերութեան չափը՝ կիմանաճք Բաքւակ շրջակալքում գտնուող բոլոր գործարանների արդիւնաբերութեան չափը, Բայց որովհետն բոլոր գործարանների արդիւնաբերութեանը անհամեմատ աւել է ներ կատ պահանջից և արտահանածից, ուստի կարելի է հաւասարաշափ կերպով չափաւորել արդիւնաբերութիւնը պահանջի հետո Ազդակս կարծում ենք տարածակնութիւններ, անբաւականութիւններ ալլ ևս չեն լինիւ ոչ ոք չի կարող գանգատւել թէ իրան քիչ է նշանակած, կամ միախին աւել.

Ընթերցողը արդէն ծանօթ է պահմանագրի թերութիւնների հետ. Մեր վաճառականներից մի քանիսը՝ Մանթաշնան, Թաղիև, եղբ. Բուղաղեանները, Դր. Լիանողովը և ուրիշ մի քանիսը միանգաման հակառակ լինելով ժողովի վճիռներին ու չկամենալով մինույն ժամանակ պատճառ դառնալ կազմւած միութեան քանդւելուն՝ հեռագրեցին մանուֆակտուրալի և արդիւնաբերութեան դեպարտամէնտի դիրեկտոր գաղտնի խորհրդական պր. Կաւալեւակուն՝ խնդրելով թովարեն, լանձին պ. Մանթաշեանի, ունենալ երրորդ առևտրական գործակալ. Հեռագրի պատասխանը մերժումն եղաւ. Սակայն ալդ մերժումն նրանց չի՞նառեցրեց, Նրանք կրկին ուղարկեցին մի ընդարձակ հեռագիր, որով թւելով մի առ մի պահմանագրի թերութիւնները, խնդրում են փոխել պահմանագրի մի քանի

լողածները ըստ իրանց նկատողութեան, Նախ և առաջ կոմիտէտը պիտի լինի բազկացած առնաւզն 9 հոգուց՝ ընտրւած բոլոր գործարանատէրերի համաձայնութեամբ, կոմիտէտից պիտի բղթեն բոլոր կարգադրութիւնն. Ները, Նա պիտի լինի պատասխանատու մարմին գործարանատէրերի առաջ, Նորա հրահանգով պիտի դործեն առնարակուն գործակալները, Խոկ կոմիտէտը պիտի գործի համաձայն ընդհանուր ժողովի ծրագրին նրկորդ՝ ոչ ոք գործարանատէրերից իրաւունք չպիտի ունենալ դաշնակցութիւնից անկախ կերոսինի առնաւզուր ունենալու, հակառակ դէպքում նա պիտի ենթարկվի մեծամեծ տուգանքների, ի վերջու ասում են. «Եթէ ձերդ բարձր գերազանցութիւնը չարմար չի գտնիլ պալմանագիրը փոխել համաձայն մեր նկատողութիւնների՝ այս ժամանակ պարտաւորւթելով իւրաքանչիւր տարի արտահանել 20 միլիոն ֆութ կերոսին դէպի Ասիակի և Եւրոպակի վաճառանոցները, մենք խոնարհաբար խնդրում ենք մեզ վրաէ ևս տարածել այն արտօնութեան ովքը, որը կը բարեհածի թուլատրել նորին բարձր գերազանցութիւն ֆինանսների մինիստրը արդէն կազմւած միութեանու».

Մի քանի օրից ալդ հեռագրի պատասխանը ստացեց պր. Կաւալեակու ստորագրութեամբ. Հեռագրի միտքը մօտաւորապէս ալս է. 1) Պետքը մողովներում մշակւած պալմանագրին չստորագրող Փիրմաները դեկտեմբերի 1-ից ոչ ուշ թող կազմեն իրանց մէջ նոր պալմանագիր՝ միմիալն անպատճառ պահպանելով իւրաքանչիւրի մասնակցութեան չափը, ինչպէս որոշած է նախընթաց պալմանագրի 2-րդ լողածում, և պարուառութելով որոշած քանակութիւնը արտահանել և վաճառել նոյն գներով ինչպէս կը վաճառեն արդէն ընտրւած գործակալները, և առանձին պահմագրով որոշել նրանց հետ գործելու սահմանները. 2) Նրանց համար պարտաւորեցուցիչ կը լինի այն պալմանագիրը, որ կը մշակվի մինիստրութեան հսկողութեամբ ամերիկական Ստանդարտի հետ միանալու համարու Համաձայն ալդ հեռագրին, նախկին պալմանագրից անբաւական գործարանատէրերը կազմեցին մի ալլ պալմանագիր, ստորագրեցին և նաւթարդիւնչերողների ժողովի խորհրդի միջոցով ներկացրին պ. Կաւալեւսկուն. Թէ ինչ պատասխան կը ստացէի և գործերը ինչ կերպարանք կը ստանան, մենք չենք զլանալ հաղորդել մեր ընթերցողներին».

Վերջացնելով մեր ներկաւ նամակը, մենք ամելորդ չենք համարում մի քանի խօսք ևս ասել նաւթահանքատէրերի մասին, որոնց գրութիւնը ևս կարու է օգնութեան,

Վերջին երկու տարիների ընթացքում հում նաւթի գները բաւական ընկած էին. 1891 թ. միջին տարեկան զինը համարում էր 2³/₄ կոպէկ,

1892թ. — 1 կոպէկ, Նթէ ընդունենք արգէն փորձով հասարաւուած այն իրողութիւնն թէ իւրաքանչիւր փութ հում նաւթ արգիւնս բեռելը հանքատիրջ արժենում է մոտ 3—3_{1/2} կոպ., այն ժամանակ ոլ ու ասենք թէ հանքատէրերի վերցին երկու տարիների վասար հասնում է մոտ 8 միլիոն ռուբլու Արդարէս, եթէ անցնելու վիճէք Բալախանու, Սարանչու կամ Խոմանու հանքերով, զուք լաճախ, համարեա թէ ամեն քաղաքինում, կը հանգիպէք անպիսի հանքերի, որտեղ միաժամանակ քաշում են 5—10 հոր, ևս ազդ հորերից քաշած նաւթի համար ռանեն շինած կամ մը քարի ամբար (շահմարան) կամ մի փոքրիկ երկաթեալ բեղերուար, որոնց պարունակութիւնը 40—50 հազար փութից աւելի չէ, Դիցուք թէ ազդ շահմարանները բաւականութիւն են տալիս խաղաղ ժամանակը, ալփինքն երբ ազդ հանքում ֆոնտան (շատրւան) չկալ բաց շբ որ ազդ միննուն հանքերում նոր հորեր են փորուամ, անպէս որ կարելի է շատրւան ստանալ, այն ժամանակ՝ ինչ անել, երբ իւրաքանչիւր օր հորը վիժում է աւելի քան 200—300 հազար փութ նաւթ, իսկ երբեմն էլ աւելի, ինչպէս էր Աստուլակնել ներկալ տարւալ ակզեներին վիժող հաջակաւոր հորը, որը օրեկան վիժում էր մինչև 800 հազար փութ, Ազդ դէպքերում մեզանում սովորաբար ալսպէս են վարւում. երբ հորը ֆոնտանի նշալներ է ցուց տալիս, հանքատէրը խակոն և եթ կարգադրում է հորի չորս կողմը, կամ հանքում աւելի ազատ տեղի հողից բարձր պատեր կանգնացնել՝ նաւթի հոսանքի առաջն առնելու համար Բալց ալդ շատ անգամ անաջող է անցնում, անպէս որ մինչև ազդ հողի պատերի պնդացնելը, նուն իսկ շատ անգամ մինչև կանգնացնելը, ֆոնտանը սկսում է խիել և նաւթի հոսանքի կատաղի ուժի առաջ ալդ պատերը անկարող են լինում վիմանալ և ալդպիսով նաւթը ցրւում է դէպի հարեան հանքերը կամ ազատ անպատում՝ կազմելով ահազին նաւթի լճեր, որոնք շատ անգամ արգելք են լինում ուղիղ հաղորդակցութեան:

Ազդպիսի դէպքերում, ֆոնտանի տէրը համարեա թէ օգուտ չի ստանում. և ալդ պարզ է թէ ինչու համար Հարկանները բացի նրանից, որ շատրւանի նաւթից օգտուամ են, պահանջուում են նաև մաքրել հարեան հանքերը լճերից, Հանքատէրը, որպէս զի բատ կարելով խոս տակ ալդպիսի ծախքերից, հէնց որ հորը ֆոնտանի նշալներ է ցուց տալիս, իսկոն և եթ ծախսում է նաւթը տիրող գնից անհամեմատ էժամն, Ազդ հանգամանքը ինքն բատ ինքեան աղջում է նաւթի գների վրա, որի շնորհիւնա ընկնում է, Տարւակ ընթացքում տասնեակ ֆոնտաններ են վիժում և իւրաքանչիւրը քիչ թէ շատ լաւ ֆոնտանը սարսափելի կերպով իջեցնում է նաւթի գները. Հէնց ալդ իսկ պատճառով նաւթի գինը տարւակ ընթացքում մի քանի անգամ թանգանում է, Ազդպէս՝ առատութեան, շատրւանների ժամանակ գները իջնում են մինչեւ $1/2$ կոպ., իսկ շատրւան-

Ները դադարելուց հետո 1—2 ամսաւում ընթացքում բարձրանում մինչև
2—2¹/₂ կոպէկ:

Սխալ է այն կարծիքը, որ շատերը լատնում են՝ իրք թէ նաւթի
վաճառման գինը կապ ունի կերոսինի գների հետ: Սրան ներքելու համար
մենք բաւական ենք համարում ասել հետեւեալը: 1888 թ. Բագու կերո-
սինի փութը վաճառւում էր 30 կոպէկ, իսկ նաւթը 2 ½ կ. մինչդեռ
նաւթի մրենուն գներին 1891 թ. կերոսինի փութը վաճառւում էր 10
կոպէկ: Վերջապէս ակա տարի լուկիս ամսին նաւթի գինը իջաւ մինչև
2¹/₂ կոպ., իսկ սեպտեմբերին բարձրացաւ մինչև 2¹/₄ կոպ., բայց կերոսինի
գինը լուկիսին բարձրացաւ 5¹/₂ կոպէկ էր, իսկ սեպտեմբերին 4³/₄—4¹/₂
կոպէկ:

Նաւթի վաճառման գները զլիսաւրապէս կախւած են նաւթահան-
քերի նաւթի ժամանակաւոր առատութիւնից կամ պակասութիւնից: Հար-
կաւոր է միմիան տեղ տալ աղդ ժամանակաւորապէս աւելացած նաւթին
և նաւթի գները ազ ևս աղպիսի լաճախակի տատանման չեն ենթարկ-
վու: Դորա համար հարկաւոր է ունենալ նաւթահանքերում մեծ պահեստ-
ներ, որտեղ կարելի լինի տեղաւորել աղդ ժամանակաւոր աւելացած
նաւթը, որը և կը գործադրվի, երբ հանքերում նաւթի պակտութիւն
կը զգացվի: Ազգիսով մենք պահեստում միշտ նաւթ կունենանք: Սական
աղդ պահեստները չպիտի ծառափն զանազան մարդկանց լոկ շահասիրա-
կան նպատակներին, Նրանք հաւասարաշափ պէտք է մատչելի լինեն
առանց խտրութեան բոլոր հանքատէրերին, որոնց հանքերը գտնուում են
Բագւակ շրջակալքում: Ենթադրելի պահեստները պիտի պարունակեն առ-
նւազն երկու ամսւակ պաշար—45—50 մլ. փութ հում նաւթ: Եւ որպէս
զի ազատ լինի ամնանա տեսակի զեղծումներից, որը սովորական բան է
մեր վաճառականների համար, ցանկալի է որ աղդ պահեստները գտնուեն
կամ նաւթարդիւնաբերողների ժողովի իրաւասութեան և պատասխանա-
տութեան տակ և կամ թէ աղդ նպատակով նաւթարդիւնաբերողներից
ընտրուի մի կոմիտէտ, որին և կը լանձնւին աղդ պահեստներին վերաբ-
րեալ բոլոր գործերը:

Սական աղդ անելու և իրագործելու համար առնւազն կը գործադրը-
փ 1,250,000 ր., որը գերազարար ներկատ հանգամանքներում չի կա-
րել ճարել հանքատէրերի ձեռքում: Կառավարութիւնը մեծ օգնութիւն
հասցրած կը լինէր հանքատէրերին, եթէ բարեհանէր թուլատրել երկա-
րատև վարկ (զօլցօրօնակ օսյա) աղդ 1,250,000 ր. համար: Սական,
ինչպէս խմացանք, աղդ մասին ինսդիր առաջարկել է երկրորդ ժողովին
Պետերբուրգում, բայց չի քննուել՝ թողնուելով ամելի պատեհ ժամանակի: